Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Վ. Գալոյան

Digitally signed by GALOYAN VARDUHI
7705800268
Date: 2022.09.22 14:12:15 GMT+04:00

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

10 -րդ դասարան

Առաքելյան Կարավ Շեքսպիրի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) ___10-րդ դասարանում սովորում են 15 աշակերտ՝ տաս տղա, հինգ աղջիկ: Նախորդ ուսումնական տարում դասարանում ութ աշակերտ ցուցաբերել են հարվածային առաջադիմություն:Դասարանում դժվար դաստիարակվող

աշակերտներ չկան: Բոլոր աշակերտները համերաշխ են, կարողանում են համագործակցել միմյանց և դպրոցի մյուս աշակերտների հետ, ունեն տարիքին բնորոշ ակտիվություն, աղջիկներն ավելի նախաձեռնող են, կազմակերպված, տղաներն ավելի ակտիվ:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում _____

. Դասասարանի ակտիվի ընտրություն, աշակերտական և ծնողական խորհրդի ձևավորում:

. Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում, կարգավորում:

. Աշակերտների կյանքի առաջնային և բարոյական արժեքների կարևորում և դրանց նվիրված դասղեկական ժամերի , միջոցառումների, մրցույթների կազմակերպում:

.Դասարանական կոլեկտիվի կենսագործունեության փուլերի (կիսամայակ) պլանավորում, իրականացում և արդյունքների ամփոփում:

. Աշխատանք ծնողների հետ, ծնող-դպրոց կապի ամրապնդում:

. Խելացի, ուժեղ, հետաքրքրասեր, հայրենիքին նվիրված և արժանի սերնդի դաստիարակում:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Կարևորել համամարդկային և քրիստոնեական արժեքները, բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը, զրույցների, միջոցառումների միջոցով զարգացնել ազնվություն, ճշտախոսություն, բարոյական վեհ արժեքներ, սրբորեն պահպանել ազգային արժեքները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակության հիմքում դնել մշակույթի ճանաչողությունը, թանգարանային և գրադարանային մշակույթի ներդրումը: Կազմակերպել այցելություններ թանգարաններ, թատերական ներկայացումներ, առցանց ֆիլմերի դիտում, գրքի ընթերցանություն: Ձևավորել բնության մեջ, արվեստում , մարդկային փոխհարաբերություններում գեղեցիկն ընկալելու և վերապրելու ունակություն:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Դաստիարակել հայրենասեր, հայրենիքի կանչով ապրող քաղաքացի: Աշակերտների մեջ սերմանել սեր հայրենիքի նկատմամբ, հարգանք պետության և պետական խորհրդանիշերի նկատմամբ: Ճանաչել և գնահատել ազգային հերոսներին, նրանց գործը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ճշտել աշակերտների առողջության մասին անհրաժեշտ տվյալները: Հնարավորության դեպքում կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, արշավներ, հետևել առողջ ապրելակերպի կանոններին: Խրախուսել սպորտային խմբակ հաճախող աշակերտներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել աշխատասիրություն, բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը:: Աշակերտներին ներգրավել հասարակական տարբեր աշխատանքներում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել բնության նկատմամբ հարգանք և խնամակալ վերաբերմունք, տեղեկացնել համամոլորակային բնապահպանական խնդիրների մասին և ձևավորել դրանք Հայաստանյան էկոլոգիական խնդիրների հետ համադրելու կարողություն:

4. Դպրոց-ընտանիք կապը
Կապն ապահովել ծնողական ժողովների, էլէկտրոնային օրագրերի միջոցով, մշտապես կապի մեջ լինել ծնողների հետ, քննարկել անհրաժեշտ հարցերը, ծնողներին ներգրավել դասարանական խնդիրների լուծմանը, աշակերտների առօրյայի կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ (34 շաբաթ):

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
1-ին շաբաթ	Դասարանի կտիվի ձևավորում; Կարգապահական հարցեր:	02.09.22թ.	

2-րդ շաբաթ	« Իմ ակնկալիքները ավագ դպրոցից» թեմայով քննարկում:	09.09.22թ.	
3-րդ շաբաթ	Զրույց՝ « Իրավունքներ և պարտականություններ» թեմայով:	16.09.22թ.	
4-րդ շաբաթ	«Հայրենիք, ազգ, մայրենի լեզու»: Պահպանենք մեր ազգային որակները:	23.09.22թ.	
5-րդ շաբաթ	Զրույց՝ «Ինչպես հասնել հաջողության» թեմայով:	30.09.22թ.	
6-րդ շաբաթ	Զրույց՝ «Ուսուցչի դերը անձի ձևավորման գործում» թեմայով	07.10.22թ.	
7-րդ շաբաթ	Զրույց՝ «Ի՞նչ է հանդուրժողականությունը» թեմայով	14.10.22թ.	
8-րդ շաբաթ	Զրույց՝ «Անտարբերությունը ծնում է չարիք» թեմայով	21.10.22թ.	
9-րդ շաբաթ	Բանավեճ՝ «Ուզում եմ և կարող եմ» թեմայով:	04.11.22թ.	
10-րդ շաբաթ	«Առողջությունը որպես կյանքի արժեք»; Առողջության հանդեպ պատասխանատու վարքագծի ձևավորում:	11.11.22թ.	
11-րդ շաբաթ	Զրույց՝ «Ես տանը, դպրոցում և ընկերներիս շրջապատում» թեմայով:	18.11.22թ.	
12-րդ շաբաթ	Զրույց՝ «Կոնֆլիկտներ, դրանց պատճառները և հաղթահարումը» թեմայով:	25.11.22թ.	
13-րդ շաբաթ	Զրույց՝ նվիրված հայկական ավանդույթներին և սովորույթներին:	02.12.22թ.	

14-րդ	Զրույց՝ «Ինչպես վարվել արտակարգ իրավիճակներում » թեմայով:	09.12.22թ.	

շաբաթ			
15-րդ շաբաթ	Էկոլոգիական խնդիրների արծարծումը համացանցում և թերթերում:	16.12.22թ.	
16-րդ շաբաթ	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում, ինքնագնահատում:	23.12.22թ.	
17-րդ շաբաթ	Զրույց աշխատանքի և աշխատասիրության մասին:Աշխատանքի դերը մարդու կյանքում:	13.01.23թ.	
18-րդ շաբաթ	Համեմատական թեստ՝«Հասկանանք մեկս մյուսին»:	20.01. 23թ.	
19-րդ շաբաթ	Զրույց նրանց մասին, ովքեր պաշտպանում են մեր հայրենիքը:	27.01.23թ.	
20-րդ շաբաթ	Համացանցը մեր կյանքում: Ի՞նչպես ճիշտ օգտվել: Արգելված խաղեր:	03.02.23թ.	
21-րդ շաբաթ	Մասնագիտական կողմնորոշում՝ ի՞նչ եմ ուզում դառնալ:	10.02.23թ.	
22-րդ շաբաթ	«Տյառընդառաջի տոն»՝ խորհուրդը:	17.02.23թ.	
23-րդ շաբաթ	Զրույց՝ «Տղամարդկանց և կանանց տնային գործերը» թեմայով:	24.02.23թ.	
24-րդ	Գարուն. սիրո և պոեզիայի ժամ:	03.03.23թ.	

շաբաթ			
25-րդ շաբաթ	Զրույց՝ « Կնոջ դերը հասարակության մեջ » թեմայով:	10.03.23թ.	
26-րդ շաբաթ	Վնասակար սովորություններ՝ կարողանալ «ՈՉ » ասել:	17.03.23թ.	
27-րդ շաբաթ	Էկոլոգիական խնդիրներ: Ջուրը կյանք է, խնայենք ջուրը:	24.03.23թ.	
28-րդ շաբաթ	Երաժշտության կախարդական ուժը:	07.04.23թ.	
29-րդ շաբաթ	Քննդատական մտածողության զարգացում՝ համաձայ՞ն եք հետևյալ արտահայտությունների հետ…	14.04.23թ.	
30-րդ շաբաթ	Երկրի օր: Խաղաղության զանգը Երկրի օրվա տոնին, ի՞նչ է կոչ անում:	21.04.23թ.	
31-րդ շաբաթ	Զրույց՝ « Ցեղասպանություն և ոճիր» թեմայով:	28.04.23թ.	
32-րդ շաբաթ	Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել:	05.05.23թ.	
33-րդ շաբաթ	Զրույց՝ « Ընտանիք և հայրենիք» թեմայով:	12.05.23թ.	
34-րդ	Ուսումնական տարվա ամփոփում: Իմ ձեռքբերումներն այս ուսումնական	19/26.05.23թ.	

Շաբաթ	տարում:		